

---

## ԱՆՎԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԳԵՏ-ՀՆԱԳԵՏԸ

(Հոհիվսիմե Զանփոլաղյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Զանփոլաղյանների գերդաստանը սերում էր Գողթան աշխարհից՝ Նախիշևանից: Ծնվել է ավանդապահ, գործարար և ձեռներեց, հարազատ ժողովրդի հոգու ու ցավով տառապող Զանփոլաղյանների ընտանիքում, որի ծոցից էր դուրս եկել Հայ կամավորական ջոկատներից մեկի հրամանատար Արշակ Զանփոլաղյանը: Հոհիվսիմեի հայրը՝ Միքայել Զանփոլաղյանը, XX դարասկզբի զարգացող հայ բուրժուազիայի այն ներկայացուցիչներից էր, որը իր միջոցները և բարեգործական գործունեությունը այլոց նման ծավալել է ոչ թե Հայաստանից դուրս, այլ իր հայրենիքում: Նրա զանքերով Երևանի կենտրոնում կառուցված թատրոնը խորհրդային տարիներին ծառայեց որպես «Սպայի տան մշակույթի կենտրոն», այսօր էլ դեռ կանգուն է:

Զանփոլաղյանների ընտանիքում գնահատվում էր ուսումը, գիտությունը և սերը արվեստի նկատմամբ: Նվիրումը հայրենիքին դիտվում էր գերազույն նպատակ:

Հոհիվսիմե Զանփոլաղյանը ծնվել է 1918 թ. օգոստոսի 26-ին Երևանից փայտած Սևանի ավազանում ժամանակավորապես ապաստանած իրենց ընտանիքում: Երբ բուրքական հրոսակները 1918 թ. մայիսին մտնում են Սարդարապատ, անմիջապես վտանգվում է Արարատյան դաշտի բնակչության խաղաղությունը: Ականավոր պետական գործիչ Արամ Մանուկյանի և ուզմաճակատի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանի հորդորով ու պահանջով Երևանի բնակչության մեծ մասը հեռանալու էր քաղաքից և ապաստանելու էր Սևանի ավազանի գյուղերում: Այդ ժամանակ էլ ահա ծնվում է Հոհիվսիմե Զանփոլաղյանը: Շուտով ընտանիքը վերադառնում է Երևան, ուր Հոհիվսիմեն հետազայում հաճախում է դպրոց, ստանում հայեցի կրթություն, իսկ մայրը, որը ուսական զիմնազիայի ընթացավարտ էր, Հոհիվսիմեին սովորեցնում է կատարելապես տիրապետել ուսւերենին:

Ավարտելով դպրոցը 1935-ին, Հոհ. Զանփոլաղյանը ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը, որը գերազանց առաջադիմությամբ ավարտում է 1940-ին: Նույն տարին էլ աշխատանքի է անցնում Հայաստանի ազգային թանգարանում: Ի դեպ, նա թանգարանում աշխատել էր նաև 1939 թվին, ուսմանը զուգահեռ, երբ տոնվում էր «Սատունցի Դավիթ» էպոսի հազարամյակը: Այստեղ էլ Հոհ. Զանփոլաղյանն արժանանում է ականավոր հնագետ-արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ուշադրությանը: Վերջինս 1942 թ. նկատելով երիտասարդ աշխատակցի ձգուումը դեպի գիտությունը, մասնավորապես հայագիտությունը, նրան է տրամադրում դեռևս 1917 թ. իր կողմից Նոր Գետիկի վանքում ընդօրինակած վիմագրերի ձեռագիր օրինակը,

հանձնարարում մեկնել հնավայր, տեղում ստուգել, համեմատել և նորովի ընդօրինակել, վերծանել վանքի վիմագրերը։ Հռիփսիմեն բարեխղճությամբ կատարում է այդ հանձնարարությունը՝ հաղթահարելով Հայրենական պատերազմի և դրան հաջորդած տարիների անասելի դժվարությունները բազմից լինելով Գոշավանքում (Նոր Գետիկի վանք)։

Թանգարանի երիտասարդ աշխատակիցը, ձեռքի տակ ունենալով Գոշավանքի վիմագրերի վերծանությունը՝ թեկնածուական ատենախոսության թեմա է ընտրում «Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը» խորագրով թեզը, որը հաջողությամբ պաշտպանում է 1948-ին. այն երախտակվում է թանգարանի աշխատությունների անդրանիկ ժողովածուի առաջին հատորում։ Աշխատությունը հիմնականում շարադրված է Նոր Գետիկի վանքի որմերին առկա վիմագրերի, պատմիչների վկայությունների գիտական համակողմանի քննության վրա, ինչը նշանակալից ներդրում է հայագիտության և վիմագրության ուսումնասիրության ոլորտում։ Շարադրանքում հեղինակը դրսեորել է վիմագրագետի փայլուն կարողություն։ Նա վերծանում և նորովի է մեկնարանում ոչ միայն Մխիթար Գոշի գործունեությանն առնչվող վիմագրական բազմակողմանի դրսեորումները, այլև հայոց պատմության մեջ վանական հաստատությունների խաղացած դերն ու նշանակությունը։ Ուսումնասիրության մեջ հեղինակը հանգում է այն հետևողական, որ հայկական նախարարական նշանավոր տան ներկայացուցիչներ Զաքարյան եղբայրները սելջուկներից ազատագրելով Հայաստանի մեծ մասը, այնտեղ հաստատում են իրենց տնտեսական և քաղաքական փաստացի իշխանությունը, որը հարուցում է ժամանակի հոգևորականության մի մասի լուս դժգոհությունը։ Ինչպես հայտնի է, Բագրատունիների հարստության անկումից հետո, օսմանների տիրապետության ժամանակաշրջանում հայ հոգևորականությունը և վանքերն էին այն նեցուկը, որոնց օգնությանն էր հաճախ դիմում անպաշտպան ժողովուրդը։ Հզորանալով՝ հոգևորականությունը և վանական մենաստաններն իրենց ձեռքն են վերցնում նաև աշխարհիկ իշխանության որոշ գործառնություններ։ Արևելյան Հայաստանում նման մենաստանների թվին էին պատկանում Հայրատ և Սանահին հոգևոր նշանավոր կենտրոնները։ Վերականգնվող աշխարհիկ իշխանության ուժեղացումով նվազում էր հոգևորականության ազդեցությունը, և առաջ էր զալիս դիմադրություն։ Ընդդիմությունը Զաքարե Զաքարյանի ժամանակ մեծ չափերի է հասնում։ «Նման պայմաններում, – գրում է Հո. Զանիոլայյանը, – լավագույն միջոցը, որ կարող էր մտածել Զաքարեն, դա հաշտության, միմյանց զհօղությունների ճանապարհն էր, սակայն սրա համար անհրաժեշտ էր, որ Զաքարեն հենվեր ոչ միայն իր ուժի և հեղինակության, այլև հեղինակավոր և ազդեցիկ հոգևորականի և վանք-մենաստանի վրա։ Ահա այդպիսին է հանդիսանում Մխիթար Գոշը և նրա հիմնած Նոր Գետիկի վանքը»<sup>2</sup>։

<sup>1</sup> Հո. Զ ա ն փ ո լ ա դ յ ա ն. Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը. – Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի (այսուհետն՝ ՀՊՊԹ աշխ.), հ. 1, Երևան, 1948, էջ 97–166։

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 105։

Ուսումնասիրության էջերում այլ խնդիրների հետ հեղինակը քննության է առնում «ժամատուն-զավիթ» տերսինների գործածության եզրերը միջին դարերում, դրանց իմաստը և հիմնափրում ժամատուն-զավիթների առաջացման ու վերջինիս հետագա իմաստավորումները: Քննության առնելով պատմական, վիմագրական, ճարտարապետական և բազմաթիվ այլ իրողություններ, նա հանգում է հետևյալին. «Ահա այս բոլոր հանգամանքները հոգևորականությանը ստիպում են ժամատունը՝ վանքի միակ աշխարհիկ շենքը, կցել եկեղեցուն: ... Եզ որովհետև նա կառուցվում է նախկին զավիթի փոխարեն, և ինքը ևս հանդիսանում էր զավիթ, ուստի կոչվում է այդ նոր շենքի երկու բաղադրիչ մասերի անունով՝ ժամատուն և զավիթ»<sup>3</sup>: Բնական է, հետագա զարգացման արդյունք են XII-XIII դարերի քարակերտ զարմանահրաշ զավիթները:

1977 թ. Հո. Զանփոլադյանը վիմագրագետ Ս. Ավագյանի հետ հրապարակում են «Դիվան հայ վիմագրության» համապատասխան հատորը՝ ընդգրկում էր Էջեանի շրջանի պատմական հուշարձանների վիմագրերը<sup>4</sup>: Հո. Զանփոլադյանը Նոր Գետիկի վանքի վիմագրերից բացի հավաքել, վերծանել է նաև Հաղարծնի, Զուհուտակ վանքի, Մարքոսավանքի վիմագիր արձանագրությունները՝ համապատասխան ծանոթագրություններով, առաջնորդվելով վիմագրության հրատարակմանը ներկայացվող ժամանակակից պահանջներով: Այդ աշխատության հրատարակումը լուրջ ներդրում էր հայ վիմագրության բնագավառում:

Հո. Զանփոլադյանը հրատարակել է նաև հայ արձանագրություններին նվիրված այլ աշխատանքներ: Մասնավորապես, ուշագրավ են Հյուսիսային Ուրալում 1970 թ. պատահականորեն գտնված սրի վրա եղած արձանագրության վերծանությանը նվիրված հոդվածները<sup>5</sup>: Մի քանի տառանիշների առկայության պայմաններում նա հանդես է բերում հմուտ արձանագրագետի կարողություն և ճշմարտացի կոռահում, ապացուցում, որ սրի վրա եղած գրերը հայերեն են և պարունակում են այն պատրաստող վարպետի անունը: Պրոֆ. Ա. Կիրապիչնիկովի հետ նա բացահայտում, սկզբնավորում է մի բնագավառ, որը միտւած էր բացահայտելու հայ միջնադարում եղած առևտրական ու մշակութային մինչ այդ անհայտ ուղղությունը:

1984 թ. նշանավոր արևելագետ Վ. Բարսոլոմի հիշատակին նվիրված ընթերցումներում Հո. Զանփոլադյանը ներկայացնում է մի հաղորդում Մերձվոլգյան շրջանում հայտնաբերված հայկական խաչքարերի վրա հանդիպող վիմագրերի մասին<sup>6</sup>: Նույն խնդրին էր նվիրված «Անիից և Բոլղարից գտնված երկու գործ-

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>4</sup> Ս. Ա վ ա գ յ ա ն, Հ ո բ ա ն փ ո լ ա դ յ ա ն. Դիվան հայ վիմագրության, պր. VI, կազմեցին Ս. Ավագյան, Հո. Զանփոլադյան, Երևան, 1977:

<sup>5</sup> Неожиданная находка на Урале.– Наука и жизнь, 1970, № 10, с. 15–17 с ил. (совместно с А. Н. Кирпичниковым); Средневековая сабля с армянской надписью, найденная в Приполярном Урале.– Эпиграфика Востока (далее – ЭВ), 1972, вып. 21, с. 23–29 с ил. (совместно с А. Н. Кирпичниковым).

<sup>6</sup> Надпись на хачкарах (крестных камнях) как исторический источник.– Бартольдские чтения, Л., 1984, с. 38–39.

վածքի մասին՝ զեկուցումը: Հեղինակը, հիմք ընդունելով գործվածքների զարդարաները, գործելու տեխնիկան, հավաստում է դրանց Անի քաղաքից ծագելու խնդիրը: Դրանով նա մի անգամ ևս ապացուցում է, որ գոյություն են ունեցել առևտրական և մշակութային կապեր Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիի և մերձկողական քաղաքների միջև:

Հո. Զանփոլաղյանի վիմագրագիտական ձեռքբերումները պայմանավորված էին հնագիտության և գրաքարի իմացության բնագավառում ունեցած փայլուն գիտելիքներով, լուսանկարելու ու գրչանկարելու հմտությամբ և աներկրա կարողությամբ: Միաժամանակ, նա կարողանում էր պատմիչների վկայություններն օգտագործելով կնճռոտ հարցադրումներ բացահայտել ու կատարել նորոգ կոակումներ: Նմանօրինակ հարցադրում էր պարունակում նրա հրատարակած հոդվածներից մեկը՝ «Վ–VII դդ. հայկական աղբյուրները Հնդկաստանի մասին» վերտառությամբ<sup>7</sup>:

Հո. Զանփոլաղյանը իր աշխատանքային պաշտոնավարումը սկսելով պատմության թանգարանում, հատկապես տարվեց հնագիտությամբ, առավել ևս, երբ 1944 թ. իր կյանքը ընդմիշտ կապէց նշանավոր գիտնական Բ. Բ. Պիոտրովսկու հետ: Չնայած դժվարին տարիներին, ծանրաբեռնված ընտանիքի ու երեխաների դաստիարակության հոգսերով՝ 1946-ից 1964 թ. պաշտոնապես չաշխատելով գիտական որևէ հաստատությունում, այնուհանդերձ, նա չհրաժարվեց թանգարանից և իր սիրած հնագիտությունից: Ապրելով Լենինգրադում, ուր տեղափոխվել էր մշտական բնակության դեռևս 1947-ից, նա իր մշտական մասնակցությունն էրերել Միջնադարյան Հայաստանի նշանավոր մայրաքաղաք Շվինի պեղումներին, հրապարակել միջնադարյան ապակեգործությանն ու սնդկամաններին նվիրված մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ:

Սնդկաման կամ ձվաձև անորթների խնդիրն իր վրա է հրավիրել ուսումնասիրողների մի քանի սերունդների ուշադրությունը: Առաջադրվել են մի շարք կրահումներ վերջիններիս նշանակության, թվագրման, տարածման արեալների մասին: Հո. Զանփոլաղյանն այդ խնդրին նվիրել է հոդվածների մի ամբողջ շարք<sup>8</sup> և առանձին ուսումնասիրություն<sup>9</sup>, ուր մանրակրկիտ քննության է ենթարկել առաջադրված բոլոր վարկածները և Ժիտել դրանց մեծ մասը: Քննելով սնդկամանների կիրառական նշանակությունը՝ ուշադրություն է նվիրել դրանց ներսում քիմիական նյութերի ու միացությունների մնացորդների առկայությանը և հանգել համոզիչ հետևողունների. սնդկամանների մեջ սկզբնապես պահպել տեղափոխվել են մեծարժեք անուշահոտ յուղեր, օճանելիք, մարմինը մերսելու ու խնամքի համար անհրաժեշտ պարագաներ, ավելի ուշ, երբ ալքիմիան լուրջ ա-

<sup>7</sup> Армянские надписи на Волге.– ЭВ, 1984, № 22, с. 73–79.

<sup>8</sup> Армянские источники V–VII вв об Индии.– Древние культуры Средней Азии и Индии, Л., с. 141–146.

<sup>9</sup> Շվինի և Անիի պեղումներից հայտնի ձվաձև անորթներ.– ՀՊՂԹ աշխ., հ. 3, 1950, էջ 147–167. Сфероконические сосуды из Двина и Ани.– Советская археология (далее – СА), 1958, 1, с. 201–213:

<sup>10</sup> Сфероконические сосуды из Двина и Ани.– Հայաստանի հնագիտական հուշարձաններ (այսուհետև՝ ՀՀՀ), № 12, Երևան, 1982:

ռաջընթաց էր ապրում Արևելքի երկրներում, սնդկամանները օգտագործվում էին առանձնապես վտանգավոր նյութեր պահելու համար, ինչպիսիք էին՝ սնդիկը և նրա հիմքով քիմիական մյուս միացությունները: Հեղինակն ապացուցում է, որ ապակեգործության զարգացումով աստիճանաբար ալքիմիկոսների կողմից օգտագործվող կավե սնդկամաններն իրենց տեղը զիջում են ապակե անոթներին՝ ալամբիկներին, որոնք քիմիական նյութերի նկատմամբ ավելի չեզոք են, առավել մատչելի ու օգտագործման առումով նպատակահարմար: Դա պատճառ հանդիսացավ կիրառությունից սնդկամանների դուրս մղմանը: Հռ. Զանփոլադյանի՝ սնդկամաններին նվիրված մենագրությունը տվյալ խնդրին առնչվող ուսումնասիրությունների մեջ առավել նշանակալից և համակողմանի շարադրված աշխատությունն է: Հեղինակը Դվինի և Սնիի սնդկամանների քննությունը կատարել է համակողմանի՝ անդրադառնալով դրանց ծագման, արտադրության տեղի ու ժամանակի, դաշտագործման, դրոշմագործման տեխնիկային, պատրաստող վարպետների նշաններին, տարածման արեալին և գործածությունից դուրս գալու խնդիրներին:

Հռ. Զանփոլադյանն իր գիտական գործունեության զգալի մասը նվիրել է Դվինի պեղումներից հայտնաբերված միջնադարյան ապակեգործությանը, որը, ի դեպ, մինչև հիմա միևնույն հնավայրից հայտնի ամենայնուր հավաքածուն է, որը տեղ է գտել Հայաստանի պատմության թանգարանում: Այդ ամենը նա համակողմանի ուսումնասիրել ու հրատարակել է տասնամյակների ընթացքում: Պարզվում է, որ Դվինում, տեղական ապակեգործության արտադրանքի կողքին, հանդիպում են գեղարվեստական ապակեգործության բարձրարժեք նմուշներ, որոնք ներմուծվել են Բյուզանդիայից, Իրանից, Իրաքից, Սիրիայից, Եգիպտոսից: Դվինի ապակուն նվիրված նրա երկու մենագրությունները<sup>11</sup> արևելյան ապակեգործության յուրօրինակ հանրագիտարան են: Հռ. Զանփոլադյանի աշխատությունները բարձր գնահատողներից էր Արևելքի ապակեգործության հիմնարար աշխատությունների հեղինակ, նշանավոր գիտնական Կ. Լամբ: Նկատենք, որ Դվինի ապակեգործության քննությանը զուգընթաց, Հռ. Զանփոլադյանը ուսումնասիրել է ուրարտական Կարմիր բլուրում, Հին Լաղոգայում և Նովոգրուղիայում հայտնաբերված ապակին<sup>12</sup>:

Հեղինակի կարևոր գուտերից մեկն էլ Հայաստանի և Հին Ռուսիայի տարածքում հայտնաբերված բյուզանդական գեղարվեստական ապակու առկայության հավաստումն էր:

<sup>11</sup> Դվինի միջնադարյան ապակին IX–XIII դդ.– ՀՀՀ, հ. 7, Երևան, 1974: Միջնադարյան Հայաստանի առնատրական կապերը VI–XIII դդ. (բայ ապակեգործության տվյալների).– ՀՀՀ № 14, Երևան, 1988 (հեղինակակից՝ Ա. Քապանթարյան):

<sup>12</sup> Два стеклянных сосуда из Новогрудка.– Византийский Временник, 1961, т. 19, с. 166–171; О трех образцах стекла из Кармир-Блура.– СА, 1964, 1, с. 307–312; Стеклянная чаша из Старой Ладоги.– Сообщения Государственного Эрмитажа, 1967, вып. 28, с. 49–50; Торговые связи в древности на основании изучения стеклянных изделий.– Pros. 15. Inter. Congr. on glass: Archaeometry, L., 1989, р. 84–86.

1953 թ. Դվինի միջնաբերդում հայտնաբերվում է իր յուրահասուկությամբ աշքի զարնող նուրբ կապույտ ապակուց ոսկեղբաղաց զարդամոտիվներով մի սրվակ։ Սրվակի գուտը մեծ հետաքրքրություն առաջ բերեց հնագետների, երաժշտագետների և, առհասարակ, արվեստաբանների շրջանում։ Գտնվեցին «հայրենասեր»-ներ, որոնք հայտարարեցին այդ սրվակի հայկական ծագումը։ Սակայն զիտական բարեխղճությանը հավատարիմ հնագետ-պատմաբանը պրայտելով զտավ բյուզանդական ապակեզործության հետ ունեցած այդ սրվակի աղերսը ու եզրակացրեց։ «Դվինի սրվակն իր պատրաստման տեխնիկայով և հատկապես զարդամոտիվների արվեստի ոճով համբնկնում է ոչ միայն բյուզանդական ապակե իրերին, ապակու նկարագրդման մասին եղած սկզբաղյուրների տեղեկություններին, այլև բյուզանդական արվեստն արտահայտող այլ իրերի հետ, որը և ավելի հավանական է դարձնում նրա բյուզանդական ծագումը<sup>13</sup>։ Սրվակի վրա պատկերված է նաև ջութակահար, որն իր գործիքը բռնել է հորիզոնական դիրքով՝ ուսին հենած։ Մասնագետների կարծիքով, աղեղի օգնությամբ նվազելու գործիքներն Արևոտրում հայտնի էին դեռևս IX դարից ու բնավ ընդունված չէր Արևելքում։ Հո. Զանփոլայյանը զտնում է, որ պատկերվածը ջութակի նախատիպ հանդիսացող ֆիղելի պատկեր է, որի հայրենիքը բաղկանյան երկրներն են՝ մասնավորապես Բյուզանդիան, որոշում է նաև սրվակի պատրաստման ժամանակը՝ XI դար։

Այդ փոքր, սակայն զիտական առումով հետաքրքրական իրը պարզում է Դվին քաղաքի ունեցած առևտրական կապերը, հավաստում, որ նրա ապակեգործ վարպետները հանդես էին զալիս նաև իրենց սեփական արտադրանքով։ Սրվակն իր տեսակի մեջ եղակի իր լինելով, կարևոր նշանակություն ունեցավ բյուզանդական ապակեզործության ուսումնասիրության համար։ Եվ, վերջապես, հաջորդ եզրակացությունը, ինչին հանգում է հնագետը, այն է, որ ֆիղելի պատկերը աղեղնավոր գործիքների մինչև օրս հայտնի հնագույն օրինակն է։

Հո. Զանփոլայյանը գործուն մասնակցություն է ունեցել 1989 թ. Լենինգրադում կայացած XV միջազգային զիտական կոնգրեսի աշխատանքներին, որը նվիրված էր ապակեզործությանը։ Այստեղ նա կարդացել է երկու գեկուցում։ Ապակեզործությանը նվիրված նրա աշխատանքները նկատի ունենալով է, որ միջնադարագետներ Բ. Մարշակը և Վ. Ռասպուտինը Արևելքի ապակու ուսումնասիրության գործում կարելի է համեմատել Վ. Լամի ունեցած ծառայության հետ։ Ինչպես Վ. Լամի, այնպես էլ Հո. Զանփոլայյանի աշխատությունները երբեք չեն հնանա»<sup>14</sup>։

Հո. Զանփոլայյանը սակավ ներդրում չունի նաև Միջնադարյան Հայաստանի քաղաքների, դրանց առևտրական կապերի, քաղաքային մշակույթի, արհեստների ուսումնասիրության բնագավառում։ Երկար տարիներ պաշտոնավարելով (1964–1990) ԽՍՀՄ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում,

<sup>13</sup> Դվինի պեղումներից հայտնաբերված ապակե սրվակը. – ՀՊՊ աշխ., հ. 5, էջ 155։

<sup>14</sup> Բ. Ի. Մարտիրոսյան, Վ. Ի. Բարսեղյան. Պատմություններ հայության մասին. Տարբերակ. Երևան, 2005, № 2, էջ 332.

նա իր կապերը չկտրեց Երևանի զիտական հաստատությունների հետ՝ հանդես գալով որպես հայ և ոռւս մշակույթի հիմնալի համատեղող:

*Հո. Զանփոլադյանն իր կյանքի վերջին տարիներն ամբողջովին նվիրեց ամուսնու՝ Բ. Բ. Պիտրովսկու զիտական ժառանգության հրատարակության նախապատրաստմանը:*

*Հոհիփսիմէ Միքայելովնան առինքնող անհատականություն էր: Նա օժտված էր բացառիկ մազնիսական ուժով: Բոլորը նրան սիրում ու հարգում էին, արժանանում նրա խորհուրդներին ու օժանդակությանը: Խառնվածքով բարեհոգի լինելով՝ մշտապես արժանացել է իրեն շրջապատողների սիրուն և գնահատանքին:*

*Հո. Զանփոլադյանը վախճանվեց 86 տարեկան հասակում՝ 2004 թ. օգոստոսի 25-ին Պետերբուրգում:*

ԻԳԻԹ ՂԱՐԻԲՅԱՆ